

## Գլխավոր տեղեկություն

|                          |                                      |
|--------------------------|--------------------------------------|
| Համար                    | ՀՕ-477-Ն                             |
| Տիպ                      | Օրենք                                |
| Ակտի տիպ                 | Ինկորպորացիա (01.01.2003-01.01.2013) |
| Կարգավիճակ               | Գործողությունը դադարեցված է          |
| Սկզբնաղբյուր             | ՀՀՊՏ 2002.12.30/60(235)<br>Հոդ.1371  |
| Ընդունող մարմին          | ՀՀ Ազգային ժողով                     |
| Ընդունման ամսաթիվ        | 11.12.2002                           |
| Ստորագրող մարմին         | ՀՀ Նախագահ                           |
| Ստորագրման ամսաթիվ       | 26.12.2002                           |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 01.01.2003                           |
| Ուժը կորցնելու ամսաթիվ   | 01.01.2013                           |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Թ Ը

Ընդունված է 2002 թվականի դեկտեմբերի 11-ին

### «ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 դեկտեմբերի 1997 թվականի, ՀՕ-183) 28-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով՝

«Անհատ ձեռնարկատիրոջ տարեկան եկամտահարկի վճարած գումարը չի կարող պակաս լինել 30000 դրամից (եկամտահարկի նվազագույն գումար):

Հաշվետու տարվա հաշվարկված եկամտահարկը նշված գումարից պակաս լինելու դեպքում դրանց տարբերությունը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում), և այն հաշվանցվում է միայն հարկատուի՝ գալիք ժամանակաշրջանի համար հաշվարկված եկամտահարկի գումարներից:

Հաշվետու տարում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատիրոջ այդ տարվա եկամտահարկի նվազագույն գումարը հաշվարկվում է պետական գրանցում ստանալու ամսվանից մինչև տվյալ տարվա վերջն ընկած ժամանակահատվածի ամիսներին համամասնորեն:

Հաշվետու տարում օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցող մարմին գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացրած անհատ ձեռնարկատիրոջ այդ տարվա եկամտահարկի նվազագույն գումարը հաշվարկվում է տվյալ տարվա սկզբից մինչև գործունեության դադարեցման պետական գրանցման ամիսն ընկած ժամանակահատվածի ամիսներին համամասնորեն:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2003 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները չեն տարածվում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնելու մասին հարկային մարմիններին հայտարարություն (հաշվարկ, հայտարարագիր) ներկայացրած այն անհատ ձեռնարկատերերի վրա, ովքեր մինչև

2003 թվականի ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում են ներկայացրել պետական գրանցող մարմին՝ գործունեությունը դադարեցնելու մասին:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ**

**Ռ. Քոչարյան**

2002 թ. դեկտեմբերի 26  
Երևան  
ՀՕ-477-Ն

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ

Համապատասխան ինկորպորացիան

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ

Համապատասխան ինկորպորացիան